062(=91·99)
P-64

Dr Jenkins

Н АРМ. 4-101а
062(=91·99)
Ф-64
06 JUN 2003
2305
804

ՀԱՅԻ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ

„ՄԵՂՈՒ“

ԱԼԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ ԸՆԿ.

1909 և 1910 թուականների.

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.

Ինվ. N. 2305

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մուխրանեան փող. № 13.
1911.

Ա/505

22 APR 2013
14502

40044-63

ԿՈՆԴԱԿ

Ամենայն Հայոց Կաթուղիկոս Մատթէոս Իզմիրլեանի

(ուղարկուած «ՄԵՂՈՒ» ընկերութեան վարչութեան։)

Մատթէոս Ծառայ Յիսուսի Քրիստոսի Անհասանելի Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Ազնուափայլ վարչութեան անդամուհեաց «Մեղու» ընկերութեան տան աշխատանաց Հայուհեաց Տփխեաց՝ Հոգեհարազատ դստերց Մայր աթոռոյս բազմասցի ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Գոհունակութեամբ և մխիթարութեամբ սրտի ընկալաք զգիր հոգեհարազատիցդ Մայր Աթոռոյս և զարտայայտեալ որդիական հաւատիս առ ի մէնջ սիրեցեալ հոգե-

2315

հարաղատ դատերցդ, զտողեալն յ 13 անցեալ սեպտեմբերի, որով շնորհաւորելով զօծումն Մեր ի Հայրապետ Ամենայն Հայոց զսրտաբուղխ մաղթանս վերառաքէք վասն կենաց և կարողութեան մերոյ յօգուտ ազգիս։

Ուրախ եմք յոյժ՝ դատերք հոգեհարազատք, ընդ լուր գովելի ձեռնարկութեանդ, զորոյ զվսեմ անհրաժեշտութիւն քաջ ըմբռնեալ Ձեր, զուն գործէք բարձր ի գլուխս պահել զկոչումն կնոջ, ներշնչել ի նա զգաղափար ինքնուրոյնութեան ինքնագիտակցութեան և աշխատասիրութեան և զարթուցանել զգիտակցութիւն վսեմ կոչմանն, որով և ի բաց մերժել զմուրացկանութիւնն, որ առ ոտս հարկանէ զարժանաւորութիւնն մարդկան։ Ապաքէն քաջ գիտէք եթէ ազգինք Եւրոպիոյ ի վաղուց անտի ըմբռնեալ զկոչումն կնոջ, որ բազմից, ի ծանրակշիռ խնդիրս հանդիսացեալ է ղեկ բախտի այսր կամ այնր ժողովրդեան, ըստ ամենայնի նկոտին դատիարակել և կրթել զիգական սեւն և տալ նմա առաջնութիւն, պահել բարձր և պանծալի զպատիւ և զփառս ի հասարակաց շրջանի։

Զարդիս զսոյն ճատագովութեան արժանի ըմբռնումն յանձին առ ի մէնջ սիրեցեալ հոգևոր դատերց մարմնացեալ տեսանիմք, զի զհետ լինիք լուսաւոր մտաց և գաղափարաց, զորս անշուշտ ունիք ներշնչել ի սիրտս հայ կնոջ, որ տակաւին կարօտի բարի օրինակի և յառաջընթացութեան առ ի նմանիլ քաղաքակրթեալ կանանց, օժտելոց լուսամիտ գաղափարօք։

Արդ այսու Հայրապետական կոնդակաւ մերով յայտնելով զգոհունակութիւն Մեր և զհայրականն անսպառ օրհնութիւն վասն շնորհաւորութեան օծման մերոյ և արտայայտեալ անկեղծ զգացմանցդ, մաղթեմք ձեզ կար և

զօրութիւն հաստատուն պահել զբարի ձեռնարկութիւնդ առ ի սփռել զլուսամիտ և զգեղեցիկ գաղափարս ի սիրտս մերազնեաց կանանց ի մխիթարութիւն ձեր և յօգուտ համայն ժողովրդեան մերոյ։ Տէր Յիսուս զօրավիգ լիցի ձեզ ի պատասխանատու և ի դժուարատար գործիդ, զի մարթասջիք սրտեռանդն ջանիւք ըստ օրինակի բազմաշխատ Մեղուի, յոր անուն յորջորջի ընկերութիւնդ, յամբողջ հասնել զնպատակ և զիղձ ձեր։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

Մաթէոս Բ. Կաթողիկոս ամ. Հայոց.

21 հոկտեմբերի 1909 ամի
և ըստ տոմարիս Ռ. Յ. Ծ. Թ. ի
Յայրապետութեան մերում Ա. ամի
Հայրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.

Իսկականի վերայ ստորագրուած է իսկական ձեռով

Մաթէոս Բ.

„ՄԵՂՈՒ“ աշխատանքի տան ընկերութեան 1909 թ. ընդհանուր ժողովի արձանագրութիւնը:

Յունիսի 6-ին տեղի ունեցաւ «Մեղու» ընկ. տարեկան ընդհանուր ժողովը ներկայ էին 35 անդամներ: Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց տիկ. Երանուհի Յաջութիւնեան, իսկ քարտուղար տ. Ցլօրա Վարդանեան:

Ժողովի զբաղմունքի առարկաներն էին՝

1) Տարեկան հաշուէտուութիւն

2) Մասնաժողովի մշակած նախագծի քննադատութիւնը:

3) Վարչութեան անդամների ընտրութիւնը:

Նախագահը ժողովը բացեց առաջարկելով քարտուղարին կարդալ տարեկան հաշուետուութիւնը. տարեկան հաշուետուութիւնից երևաց որ ընդհանուր մուտք 1908 թ. եղել է 9,594 ր. 78 կ. իսկ ծախս—7,439 ր. 33 կ.

Ժողովը առանց առարկութեան վաւերացրեց այդ հաշիւը և հաստատեց առաջիկայ տարուայ նախահաշիւը:

Այնուհետև ժողովը անցաւ մասնաժողովի մշակած նախագծին և մաս մաս քննադատութեան առաւ նորա կէտերը:

Նախ երկար խօսուեց այն բանի մասին թէ հագուստների քիմիապէս մաքրելը, որքան համապատասխան է աղջիկների համար:

Տիկ. Շախպարոնեան յայտնեց, որ դա միանգամայն վնասակար է աղջիկներին առողջութեանը, որովհետև գործածւում է զանազան թունաւոր դեղորայք: Բայց մասնաժողովի անդամ պ. Ակունեանը բացատրեց, որ այժմս գործածւում են ամենանվնասակար դեղորայք և որ խստիւ արգելուած է թունաւոր դեղերի գործածութիւնը և միևնոյն ժամանակ պ. Ակունեան պարզեց ժողովին այն յետևեալ դրդապատճառները որոնց հիման վրայ մասնաժողովը գտել է նպատակայարմար այդ արհեստը՝ նախ, որ այդ արհեստը ինքն ըստինքեան շատ դիւրին և պարզ արհեստ է և երկրորդը չի պահանջում բարդ և թանգ ինվենտար և ամեն մէկը սովորելուց յետոյ կ'ունենայ հնարաւորութիւն ինքնուրոյն աշխատելու, առանց մեծ սկզբնական ծախսերի: Բացատրութիւններից յետոյ նախագահը գտաւ հարցը պարզուած և առաջարկեց դնել քւէարկութեան ձայների ստւար մեծամասնութեամբ անցաւ հագուստների քիմիապէս մաքրելու արհեստը:

Այնուհետև ժողովը անցաւ նախագծի մէջ առաջարկած միւս արհեստներին՝ ինչպէս՝ կար ու ձևը իւր ճուղաւորութեամբ կուլինարնի, կառտօնաժնի արհեստական ծաղիկներ պատրաստելը: Շամախի գործուածքների արհեստանոց այս բոլորը ժողովը գտաւ նպատակայարմար և որոշեց աստիճանաբար. ըստ ընկ. նիւթական միջոցների բանալ այդ վերոյիշեալ արհեստանոցները: Արհեստանոցներից յետոյ ժողովը անցաւ նախակրթական դպրոց—արհեստանոցի ծրագրին, որը նոյնպէս առաջարկել էր մասնաժողովը իւր մշակած նախագծի մէջ:

Այստեղ տեղի ունեցաւ երկար վիճաբանութիւններ սկզբունքային տեսակէտից տիկ. Շախպարոնեան և տիկ. Շխեան գտնում էին, որ ընկ. շեղուած է իւր նպատակից դպրոց պահելով որովհետև այդ բոլորովին չի մտնում ընկ. ծրագրի մէջ: Աշխատանքի տունը պէտք է միմիայն զբաղուի նրանով, որ գործ մատակարարէ հազարաւոր չքաւոր կանանց, որոնք սև չոր հացի կարօտ են: Այս հարցի առթիւ խօսեցին տ. Մինասեան, Զաւարեան, Յարութիւ-

նեան և Վարդանեան և բոլորը յայտնում էին այն կարծիքը, որ ընկ. երբէք չէ շեղուած իւր ծրագրից, որ դպրոց-արհեստանոցը նոյնչափ մտնում է իւր ծրագրի մէջ, որքան և աշխատանքի տունը և բացի այդ փաստերով ապացուցեցին որ ընկ. վարչութիւնը միշտ մեծ ջանքեր է թափել բաւարարութիւն տալ իրան դիմող բազմաթիւ չքաւոր կանանց, որ սկզբներում ընկ. այդ նպատակով առնում էր մեծ քանակութեամբ կտորներ և բաժանում կանանց որ նոքա կարեն զանազան հասարակ գործածական առարկաներ և այնուհետև այդ պատրաստած իրերը դուրս էր բերում շուկայ ծախելու, բայց ընկ. երկար չկարողացաւ շարունակել իւր այդ ընթացքը, որովհետև նա չդիմացաւ շուկայում կօնկուրենցիային և շարունակ ընտուելով վերջ տուեց այդ տեսակ գործ մատակարարելու միջոցին։

Այնուհետև ընկ. մտածեց վերցնել պետական և մասնաւոր հաստատութիւններից կապալով կար և նրան յաջողուեց անցեալ 1908 թ. մարտին Թիֆլիսի Ինտենդանտսվոյից զօրքի համար կարեր վերցնել, որով 6 ամիս շարունակ 300 բառի բուն նշանակութեամբ չքաւոր աղքատ կանայք վաստակում էին իրանց օրապահիկը։

Եւ որովհետև այդ աճուրդից յետոյ, երկար ժամանակ շնորհիւ ընկ. անկախ պատճառներից չէր յաջողւում այդ տեսակի կարեր վերցնել, ուստի նա սկսեց կազմակերպել բազարներ չքաւոր կանանց գործ մատակարարելու նպատակաւ, որոնցից մէկը տեղի ունեցաւ դեկտեմբերին, իսկ միւսը մայիսին. Բացի այդ վերոյիշեալ խօսողները յայտնեցին ընդհանուր ժողովին, որ վարչութիւնս այն աստիճան շահագրգռուած է այդ խնդրով, որ իր վերջին նիստերից մէկում որոշել է կապալով կար վերցնել կանանց գործ մատակարարելու համար, նոյն իսկ այն դէպքում, եթէ այդ կապալից ընտուի։

Խօսք խնդրեց պ. Ակունեան և սկզբունքային տէսակէտից մօտեցաւ խնդրին։

Պ. Ակունեան յայտնեց այն կարծիքը, որ ընկերութ. բռնած ընթացքը, այն որ ընկ. պահում է դպրոց, արհեստանոց և արհեստանոցներ միմիայն մեծ պատիւ է բերում, որովհետև այդ ապացուցանում է որ ընկ. լաւ ըմբռնել է իրան առաջ դրած լայն նպատակները և այն ցաւերը և վշտերը, որոնց հանդէպ նա կանգնած է ոչ թէ աշխատում է, նոցա ժամանակաւորապէս սփոփել, հանգստացնել, այլ նա գալիս է նոցա հիմնաւորապէս ոչնչացնելու։ Ընկ. Սովորեցնելով աղջիկներին զանազան արհեստների և տալով նրանց նախապատրաստական կրթութիւն, ազատում է նոցա քաղցածութեան այն ճիրաններից, որոնց մէջ գտնւում են իրանց մայրերը, որովհետև այդպիսով այդ աղջիկների ձեռքը տալիս է զէնք. որոնցով նրանք պիտի կռուեն իրանց սպառնող քաղցածութեան դէմ։

Այնուհետև խօսեցին տիկ. Շախպարոնեան և Շիսեան և նրանք կրկին յայտնում էին որ ընկերութիւնը շեղուած է իր նպատակից։

Վիճաբանութիւնը տևեց բաւական երկար, այնուհետև տիկ. Ֆլ. Վարդանեան որպէսզի մի կերպ համաձայնեցնէ վիճաբանող կողմերին, առաջարկեց հետևեալը. մօտ ապագայում հիմնել աշխատանքի բիւրօ, որը աշխատանք տայ ընկերութեան դիմող բազմաթիւ չքաւոր կանանց, այս առաջարկութիւնը միաձայն ընդունուեց։

Այնուհետև նախագահը համարելով նախագիծը բաւական պարզուած, առաջարկեց հաստատելու։ Ժողովը ձայների ստուար մեծամասնութեամբ ընդունեց մասնաժողովի նախագիծը։

Այնուհետև ժողովը պէտք է անցնէր անդամուհիների ընտրութեան բայց ժամանակի ուշ լինելու պատճառով այդ հարցը մնաց յետևեալ ժողովին։ Ժողովը փակուեց ժամը 3½-ին։

Նախագահ՝ Երանուհի Յարութիւնեան
Անդամ. քարտուղար՝ Փլորա Վարդանեան

Երկրորդ ժողովի արձանագրութիւն

Հոկտեմբերի 18-ին 1909 թ.

Տեղի ունեցաւ Մեղու ընկերութեան Յունիսի 1-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը օրակարգի հարցը— Վարչութեան անդամների, 3 փոխանդամների, վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամների և 2 փոխանդամների ընտրութիւնը։

Վերընտրուեցին միաձայն տ. Մինասեան, Արարատեան, Աբրահամեան, նոր ընտրուեցին ձայների ստուար մեծամասնութեամբ տ. Յովհաննիսեան, տ. Մուշայեան, տ. Քամոյեան, և տ. Թևեան։ Փոխանդամներ՝ տ. Հ. Մարգարեան, տ. Ա. Բոյաճեան, և օր. Քալէ Ղազարեան։ Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ տ. Թերզիբաշեան, տ. Գիւզալեան և օր. Սերեբրակեան։ Փոխանդամ տ. Զարդեղեան, օր. Շահվերդեան։ Ժողովը վերջացաւ ժամը 2-ին։

Նախագահ՝ Երանուհի Ցարութիւնեան

Քարտուղար Փլորա Վարդանեան։



»Մեղու« ընկերութեան վարչութիւնից ընտրուած դպրոց-արհեստանոցի համար նոր ծրագիր կազմող մասնաժողովի արձանագրութիւնը։

—

«Մեղու» աշխատանքի տան դպրոց-արհեստանոցի համար նոր ծրագիր մշակող յանձնաժողովը ունեցաւ չորս նիստ։

Այս ժողովներին, բացի յանձնաժողովի անդամների՝ տ. տ. Մինասեան, Յակոբեան, Վարդանեան և պ. Սոլովեան, հրաւիրուած էին նաև՝ տ. Յարութիւնեան, պ. պ. Ակունեան և Թէրզիբաշեան իբրև օգտակար և ձեռնհաս անձնաւորութիւններ։

Օրակարգի հարցերը հետևեալներն էին.

1. Ընդունելութիւն դպրոց-արհեստանոցում.
2. Արհեստներ.
3. Դպրոց-արհեստանոցի ընթացքը.
4. Առարկաներ.
5. Դասերի քանակութիւնը։

Առաջի հարցի վերաբերմամբ, թէ ինչ պատրաստականութիւն ունեցող աշակերտուհիներ ընդունել դպրոց-արհեստանոցում, տեղի ունեցաւ մտքերի երկար փոխանակութիւն. ոմանք յայտնում էին այն կարծիքը, որ պէտք է ընդունել նոյն իսկ անգրագէտներ առանց որևէ պատրաստականութեան և այնպիսի թշուառներին, որոնք շնորհիւ ծայրահեղ չքաւորութեան չեն կարողացել մինչև 11—12 տարեկան հասակը ոչ մի դպրոց մտնել. բացի այդ, որ վերոյիշեալները լինեն անպայման «Մեղու» աշխատանքի տան աշխատաւոր կանանց աղջիկները։

Ժողովը բազմակողմանի քննադատութեան ենթարկելով այդ առաջարկութիւնը, գտաւ միանգամայն անհնարակայարմար ընդունել անպատրաստ աշակերտներ հեռևեալ պատճառաբանութիւններով։

1. Եթէ նոյն իսկ «Մեղու» ընկերութիւնը իրան նը-պատակ դնէր գրագիտութիւն տարածել այդպիսի չքաւոր-ների մէջ, դոցա թիւը այնքան շատ է և՝ կարիքը այնքան մեծ, որ նրա գործունէութիւնը այդ ուղղութեամբ կլի-նէր մի կաթիլ ծովի մէջ. բացի այդ՝ նա երբէք չէր հասնի իր ծրագրած նպատակին, այն է՝ տալ կեանքի մէջ գիտա-կից և ինտելիգէնտ արհեստաւորներ, որոնք լաւ իմանան իրանց արհեստը և գիտակցօրէն վերաբերուեն նրան։ 2. Եթէ ընկերութեան արհեստանոցները կմտնեն աշակերտներ ո-րոշ պատրաստականութեամբ և կարողութեամբ, այն ժա-մանակ ընկերութիւնը հնարաւորութիւն կունենայ ինտե-լիգէնտ արհեստաւորներ պատրաստել կեանքի համար։

Ժողովի կարծիքով այդպիսիները հանդիսանում են ծխական դպրոց աւարտած աշակերտուհիները։ Այս վեր-ջինները դուրս են գալիս կեանքի ասպարէզ այնքան քիչ մտաւոր պաշարով, որ իրանց գիտութիւնը չեն կարող գործադրել կեանքի մէջ։ Ահա այդպիսիներին օգնելը, ժո-ղովի կարծիքով, պէտք է լինի «Մեղու» ընկերութեան նպատակը։ Ընդունելով այդպիսիներին՝ նա պիտի հնարա-ւորութիւն տայ շարունակել իր դպրոցում և կատարելա-գործուել մի որևէ արհեստի մէջ իբրև մասնագիտութիւն, որպէսզի սոցանից պատրաստի կեանքի կուռի համար ան-կախ և ինքնուրոյն մարտիկներ։ Բացի այդ կարևոր հան-գամանքից նկատուել է և այն որ այդ չքաւորները և դժբաղդները, որոնք 11 կամ 12 տարեկան հասա-կը չեն կարողացել մտնել մի որևէ դպրոց, սոցա ըն-տանեկան հանգամանքներն այնքան վատ են, որ չունեն այն հարկաւոր և նպաստաւոր պայմանները, որ կարողանային սովորել։ Ինչպէս ստատիստիկան ցոյց է տալիս, սոցա թիւը շատ-շատ է։

Այսպիսիների համար ժողովը եկաւ այն եզրակացու-թեան, որ հարկաւոր է ունենալ երեկոյեան դասընթաց-ներ և որոշեց առաջարկել վարչութեանը, որ ապագայում,

երբ նիւթական միջոցները թոյլ տան, բանայ վերոյիշեալ կուրսերը։ Ուրեմն ժողովը ի նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, որոշեց ընդունել դպրոց-արհեստանո-ցում այնպիսի աշակերտուհիներ, որոնց գիտութիւնը մո-տաւորապէս համապատասխան լինէր մի դասեան ծխական դպրոցից աւարտածների գիտութեանը։

Որոշեց հետևալ ծրագիրը ընդունելութեան համար.—

1. Դպրոցի տիպը անպայման պիտի լինի պրոֆեսիոնալ.

2. Հայոց լեզուից պահանջել միջին արագութեամբ կարդալ և գրել թելադրութիւն առանց խոշոր սխալների։

3. Ռուսաց լեզուից նոյնպէս միջին արագութեամբ կարդալ և գիտենալ մի քանի ուղղագրական կանոններ՝ ինչպէս Ъ, Ь, Ѣ-ի գործադրութիւնը։

4. Թուաբանութեան խնդիրներ և օրինակներ չորս գործողութեամբ բազմանշան թուերի։

Երկրորդ կարևոր խնդիրը արհեստների ընտրողու-թեան հարցն էր, թէ որ արհեստներին աւելի նախապատ-ուութիւն տալ։

Այս հարցի նկատմամբ ժողովականներից մէկը յայտ-նեց այն կարծիքը, որ արհեստներ ընտրելիս պէտք է ի նկատի ունենալ այն հանգամանքը, թէ որ արհեստները կամ ձեռարհեստները աւելի պէտք են գալիս կնոջը ըն-տանիքի մէջ, իբրև մայր և կարծում էին՝ որ չպէտք է անցնել միայն մի որևէ արհեստ իբրև մասնագիտութիւն, այլ իբրև ընդհանուր առարկաներ. պատճառաբանելով այդ առաջարկութիւնը նրանով, որ ստատիստիկան ցոյց է տը-ւել, որ կին-արհեստաւորները կամ մասնագէտները երբ ունեն որոշ արհեստ, որի միջոցաւ իրանց կեանքի ապ-րուստն են հայթայթում, նոքա միայնակեաց կեանք են վարում և չեն ամուսնանում։ Այսպիսով խախտւում է ընտանեկան կեանքի սիւնը։

Ժողովը անհիմն գտնելով այդ առաջարկութիւնը, քա-նի որ արդէն սկզբի տարիներում աշակերտուհիները ստա-նում են ընդհանուր կրթութիւն, ուստի որոշեց անպատ-ճառ արհեստները անցնել իբրև մասնագիտութիւն, այդ-

պիսով աշակերտուհիներին զէնք տալ կեանքի կռիւը դուրս գալու համար։

Բացի այդ ժողովը բացատրեց, որ ամուսնութեան հետզհետէ սակաւանալու պատճառը ոչ թէ կնոջ մասնագիտութիւն սովորելն է, այլ դրա պատճառները և դրա արմատները պէտք է փնտրել ներկայ տնտեսական կազմի մէջ միկրոդմից և միւս կողմից կնոջ ինքնագիտակցութեան հասնելու մէջ։ Կեանքը այնչափ ծանրացել է և պայմանները այնչափ դժուարացել, որ կինը նախապատուութիւն է տալիս առանձնակեաց կեանքին, քան թէ դժբաղդ ամուսնութեանը և այդ վերոյիշեալ տնտեսական պայմանների ազդեցութիւնը կեանքի վրայ այնչափ ուժեղ է, որ մի ընկերութիւն իր գործունէութեամբ որքան ջանար, աշխատէր կնոջը կապել ըտանիքի սիւնին, նա անկարող կլինէր այդ անել։ Մտքերի այսպիսի փոխանակութիւնից յետոյ ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ արհեստները ընտրելիս ժողովը պէտք է ղեկավարուի այն բանով, թէ ներկայ տնտեսական և սոցիալական պայմանների մէջ ինչ տեսակի կին-արհեստաւորների պահանջ կայ։ Ի նկատի ունենալով այս տեսակէտները, ժողովը գտաւ անհրաժեշտ. 1) կար ու ձևը իր զանազան ճիւղաւորութիւններով՝ այն է զանազան իրերի, հագուստների, գուլպաների, զգեստներ կանանց ու երեխաների և սպիտակեղէններ. 2) հագուստների քիմիապէս մաքրելը. 3) կարտոնաժնի (արկղագործական) արհեստանոց. 4) արհեստական ծաղիկներ շինելը. 5) զամբիւղագործութիւն. 6) անպէտք և հնացած կտորներից մի որևէ բան շինել. 7) խոհարարական կուրսեր և այդ միայն այն դէպքում, երբ հնարաւորութիւն լինի պատրաստած կերակուրները սպառել սեփական հակալկոհոլական և վեգիտարեան ճաշարանի միջոցաւ։ (Այս արհեստի նպատակն է էժան և առողջապահիկ կերակուրներ պատրաստել)։ 8) զանազան ձեռարուեստներ։

Առարկաներ ու նոցա քանակութիւնը։

Հայոց լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն, առողջապահութիւն, ապրանքագիտութիւն, տարրական քիմիա։ Դասերի ընդհանուր թիւը շաբաթական 10—12, օրական 2 ժամ, մնացած ժամերը կար ու ձև և ուրիշ արհեստներ։ Դասընթացը դպրոց-արհեստանոցում երկու տարի և ապա իւրաքանչիւր արհեստանոցում երեք տարի։

„ՄԵՂՈՒ“

ընկերութ. վարչութ. 1909 եւ 1910 թ. գործունեութիւնը.

Վարչութիւնը հաւատարիմ մնալով իւր նշանաբանին, միշտ բարձր պահել կնոջ կոչումը, աշխատել է իրան դիմող բազմաթիւ չքաւոր կանանց տալ գործ, աշխատանք, փոխանակ ողորմութեան։ «Աշխատանք փոխանակ ողորմութեան» սա այն հիմնաքարնէ, որը կնոջը պիտի բարձրացնէ ստոր և անարդ դրութիւնից, երբ մարդ մեռցնելով իր մէջ բոլոր մարդկային արժանաւորութիւնները, ձեռք է կարկառում և ողորմութիւն խնդրում ամեն մի անցորդից։ Վերոյիշեալ սկզբունքը հանդիսանալով ղեկավարող, դրդել է վարչութեանս առաջիկայ տարիներում սկսած ձեռնարկութիւնները շարունակել և միաժամանակ դիմել նոր միջոցների, որոնք նպաստէին իր հիմնական սկզբունքների իրագործմանը։

Ա. Կապալ։

Վարչութիւնս անցեալ տարիների փորձերից համոզուեց, որ կապալը ամենալաւ միջոցն է աշխատանք բաշխելու կանանց, ուստի որոշեց լինել բոլոր աճուրդներին ինտենդանտստվոյում, ուր կապալով էր տրւում, երբեմն մեծ, երբեմն փոքր քանակութեամբ զօրքի սպիտակեղէններ։ Գնալով աճուրդի, վարչութիւնը իր գները միշտ բարձր էր նշանակում՝ ի նկատի ունենալով աշխատաւոր դասակարգի շահերը։ Սակայն մասնաւոր կապալառուները իրանց գները այնքան ցածր էին դնում, որ վարչութիւնը առանց ընդհանուր ժողովի, չէր կարող այդքան զգալի փոփոխութիւն անել գների մէջ։ 1909 թ. Ապրիլին հրա-

ւիրելով ընդհանուր ժողով, վարչութիւնը բացատրեց ժողովին մասնաւոր կապալառուների բռնած դիրքը, յայտնելով միևնոյն ժամանակ, որ ինքը մրցել կապալառուների հետ չի կարող, որովհետև այն սկզբմունքներով, ինչ սկզբմունքներով, որ ղեկավարւում է մասնաւոր կապալառուն՝ իջեցնելով գները մինիմումի, վարչութիւնը չի կարող այդ անել, հետևապէս մնում է հրաժարւել պետական կապալներից և դիմել մասնաւոր կապալների։

Ընդհանուր ժողովը երկար քննելով այս հարցը, եկաւ այն եզրակացութեան, որ մասնաւոր կապալներով չի կարելի բաւարարութիւն տալ 300—400 չքաւոր աշխատաւոր կանանց. հետևապէս պէտք է դարձեալ վերցնել պետական կապալներ. ուստի լիազօրութիւն տւեց վարչութեանը դնալ աճուրդի և ինչ գնով էլ լինի, մինչև անգամ 700—800 բուբլի վնասով, վերցնել պետական կապալներ, իսկ այդ վնասը ծածկել զանազան երեկոյթներով, զբօսանքներով կայն կայն։ Ընդհանուր ժողովը ղեկավարւելով այս սկզբմունքով, ի նկատի ունէր այն բարոյական մեծ օգուտը, որ նա վերցնելով պետական կապալ և մեծ քանակութեամբ գործ մատակարարելով, հասած կ'լինի մասամբ իր ծրագրած նպատակին։

1909 թւի յունիսին վարչութիւնս ստացաւ ինտենդանտամոյից մի շրջաբերական, որով յայտնում էին Պետերբուրգի զինուորական խորհրդի որոշումը, այն է՝ իւրաքանչիւր պետական կապալից մի որոշ քանակութիւն առաջարկել աշխատանքի տներին այն գներով, ինչ գներով կմնայ կապալառուների վրայ։

Այս շրջաբերականից մի երկու ամիս յետոյ վարչութիւնս ստացաւ ինտենդանտամոյից այդպիսի մի առաջարկութիւն, այն է՝ վերցնել 300,000-ից աւելի զօրքի սպիտակեղէն այն գնով, ինչ գնով որ մնացել է Ղարսում ինչոր Պապայեանի և Սարգսեանի վրայ։

Ահա այս այն կապալն է, որի մանրամասն հաշիւը, բրև յաւելուած, տպւած է մեր տարեկան հաշիւներում

և որի մասին վարչութիւնս ստիպուած է մի փոքր կանգ առնել, բացադրելով ժողովին այն բոլոր խոչնդոտները, որոնք մասամբ արգելք եղան գործը տանելու այնպէս յաջող և օգտաւէտ, ինչպէս տարւել էր 1908 թւի կապալը։ Նախ կապալի մեծութիւնը պահանջում էր մեծել գրաւական ներկայացնել կառավարութեան կարելու նիւթեղէնի համար։ Չնայած որ աշխատանքի տներին թոյլ է տրւում մի բուբլու ապրանքի դէմ 1/4 բուբլու միայն գրաւական ունենալ, այնուամենայնիւ կապալը այնքան մեծ էր, որ անհրաժեշտ էր ունենալ գոնէ 4,000 բուբլի գրաւական—մի բան, որ կարող էր բոլորովին զրկել կապալից, եթէ պ. Խաչատուր Աֆրիկեանը իր երաշխաւորութեամբ այդ դումարի վարկ չբանար մեզ համար երկրորդ փոխադարձ վարկի ընկերութեան մէջ։ Երկրորդ։ Զինուորական կամիսիան, որ առաջին տարիներում օրական 10,000-ից մինչև 16,000 կտոր կարած սպիտակեղէն էր ընդունում, այդ օրից սկսեց այնքան խիստ ընդունել, որ օրական ամենաշատը ընդունում էր 1,000 կտոր։ Այդ խստութիւններից ամենասոսկալին այն էր, որ հաշւում էին թէ մի վերշոկ կարի մէջ քանի դարձակաը—строчка կար։ Եթէ ստուգիչների սահմանուած թիւը չէր դուրս գալիս, այդ կարը համարւում էր անպէտք—բռաք։

Շապիկի երկարութիւնից եթէ 1/16 երրորդական վերշոկ կարճէր լինում, համարւում էր բռաք և այլն և այլն։ Այսպէս շարունակեցին ընդունել մինչև կապալը վերջանալը։

Կարերը կարւում էին, ընկերութեան ամբարները լցւում էր պատրաստի յանձնելու սպիտակեղէններով, բայց ընդունվում էր շատ քիչ։ Այնպէս եղաւ, որ 30,000—40,000 կտոր պատրաստի սպիտակեղէն կար ամբարներում։

Երրորդ. Ահա այսպիսի անյաջողութեան ժամանակ վրայ հասաւ մի այլ դժբախտութիւն—հրդեհը. վարչութիւնը իր գլուխը կորցրեց. անդին քանակութեամբ պատ-

40044-67

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ԱՄՆ.ՍՍՌ
Ա. ԿԻՄ Ա. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

բաստի և անպատրաստի ոպիտակեղէն այրուեց։ Թէև ապրանքը ապահովագրուած էր և ինչպէս ցոյց է տրուած հաշիւներում, վարչութիւնը ստացաւ իր վնասը, բայց այն ժամանակը, որ նա գործ էր դրել այդքան գործը կատարելու, ծախսերը, որ նա ունեցել էր թէ ձեւելու և թէ ռոճիկների համար, չէր կարող յետ ստանալ։

Չորրորդ՝ թէ վերոյիշեալ պատճառները և թէ աշխատող ձեռքերի պակասութիւնը (ամառ ժամանակ այս հրակայական գործը ծանրացել էր միմիայն մի երկու վարչութեան անդամուհիների և 3—4 ծառայողների վրայ) պատճառ դարձան կապալից ոպասած աւելորդ կտորտանքից (прикрой) միայն կէսը ստանալ, իսկ միւս կէսը անցաւ վնասի հաշուում. (տես. հաշիւ)։ Սակայն չընտելով այս բոլոր խոչնդոտներին, չնայելով որ ընդհանուր ժողովը լիազորութիւն էր տուել վարչութեանս կապալը վերցնել նոյնիսկ դեֆիցիտով, այնուամենայնիւ ինչպէս հաշիւներից երևում է կապալը, բացի այն բարոյական մեծ օգուտը, որ մի տարի և կէս 300—400 կին պահպանում էր իր գոյութիւնը (ստացած կարելավարձի մեծ տոկոսը բաժանուած է կանանց), տուեց մեզ և նիւթական օգուտ 1800 ռուբլի։

Բացի այս մեծ կապալը, ընկերութիւնը վերցրել է նաև մանաւոր կապալներ՝ քաղաքային հիւանդանոցից, Ներսիսեան դպրոցից, Արամեանցի հիւանդանոցից, կանանց ծննդաբերական ապաստարանից, կուոլենոկի զօրադնդից և այլն։ Պէտք է նկատել, որ այս մանաւոր կապալների համար վարչութիւնը ծառայողների համար ծախս չէ ունեցել, այլ վարչութեան անդամներից մի բանիսը վերցրել են իրանց վրայ և կատարել, տնտեսելով այն ծախսը, որ պիտի տուէր ծառայողներին իրրև ռոճիկ։

Բ. Բազար

Վարչութիւնս խրախուսուելով նոյնպէս տարւայ բազարից (էժան վաճառք) այս 1909 և 1910 թուականներին նոյնպէս կազմակերպեց 1909 թուի Մայսին և 1010 թ. Ապրիլին գարնանային բազարներ։

Վարչութիւնս գտնելով բազարները նպատակայարմար, որ նրանց միջոցաւ մի կողմից գործ է տրւում աշխատաւոր կանանց և միւս կողմից այնտեղ վաճառւում են կոզմիակի չքաւոր կանանց գործքերը, որոնք իրանք հնարաւորութիւն չունեն հանելու շուկայ վաճառքի, որոշեց ապագայում աւելի լաւ կազմակերպել այդ բազարները. տարին երկու անգամ՝ ձմերային և գարնանային։

Գ. Աշխատանքի բիւրո.

Թէպէտև ընկ. իւր մայիսի ընդհանուր ժողովին որոշել էր բանալ մօտ ապագայում «Աշխատանքի բիւրո», բայց շնորհիւ վերոյիշեալ մեծ կապալի որով ընկ. հնարաւորութիւն ունէր բաւական երկար ժամանակ 400 կանանց տալ աշխատանք, այնքան չէր զգացւում այդ պահանջը. բայց մօտ ապագայում այդ հարցը կ՚ստանայ իրա լուծումը։

Այդ գործը աւելի լաւ հիմունքների վրայ դնելու համար արդէն հարցական թերթեր է պատրաստել բանւորուհիների համար, որպէսզի նրանց բաժանէ այդ տեղեկութիւնների համաձայն զանազան կատեգորիաների և տայ նրանց պահանջի համեմատ գործեր։

Բացի այդ, հարցական թերթերը կ՚ծառայեն նաև վիճակագրական տեղեկութիւնների համար ճիշտ աղբիւրներ։

Դ. Կազմարան

Ընկ. նախորդ տարիներում ունէր կազմարարական արհեստանոց, բայց այդ գործը շատ դանդաղ էր առաջ գնում. նախ. ինչպէս քանիցս անգամ նկատուել է, մեքենաների բացակայութեան պատճառաւ, և այն որ այդ արհեստը մեծ դժուարութեամբ են կարողանում ազջիկները իւրացնել, շնորհիւ այն հանգամանքի, որ մեծ ֆիզիկական այժ է պահանջում։ Հիմնուելով այդ վերոյիշեալ ծանրակշիռ պատճառների վրայ ընկ. ընդհ. ժողովի որոշմամբ փակեց ժամանակաւորապէս և դորա փոխարէն բացել նոր արկղազործա

կան արհեստանոց, գտնելով այդ արհեստը վերին աստիճանի պարզ և դիւրին աղջիկների համար, որտեղ աշխատում են 30-ից աւելի աշակերտուհիներ։ Այս աշակերտուհիները գլխաւորապէս ծայրահեղ չքաւոր ընտանիքներից են, որոնք իրանց չքաւորութեան պատճառաւ, նոյնիսկ հնարաւորութիւն չեն ունեցել աւարտել ծխական դպրոցներ։

Արկղագործական արհեստանոցում ընդունւում են աշակերտուհիները հետևեալ պայմաններով։ — Նրանք մի որոշ ժամանակ, մօտաւորապէս 2 ամիս ձրի աշխատելուց և արհեստը իւրացնելուց յետոյ ստանում են որոշ աշխատավարձ՝ մինչև 8 ր. ամսական։

Բացի այդ արկղագործական արհեստանոցում աշխատող բանուորուհիները ստանում են թէյ։ Արկղագործական արհեստանոցի առաջին տարեայ գրամական հաշիւը կցած է ընդհ. հաշուին յաւելուած։

Արհեստանոց կար ու ձևի։

Արդէն չորրորդ տարին է որ «Մեղու» ընկերութիւնը շարունակում է իւր կար ու ձևի արհեստանոցը։ Այս արհեստանոցի նպատակն է մի կողմից տալ հնարաւորութիւն ընկ. դպրոց-արհեստանոցաւարտ աշակերտուհիներին կատարելագործելու կար ու ձևի մէջ և միւս կողմից գործ տալ այդ դպրոց-արհեստանոցը աւարտող աշակերտուհիներին։ Այս աշակերտուհիները անցնելով կար ու ձևի արհեստանոցը մի որոշ ժամանակ ձրի աշխատելուց յետոյ, ստանում են վարձ՝ ամսական 10—14 ռուբ.։ Օրական այս արհեստանոցում աշխատում են 6 ժ.

Ներկայումս, ընկ. արհեստանոցում բացի իւր դպրոց արհեստանոց աւարտողները, կան 4 կողմնակի բանուորներ Հ. Բ. ընկ. կար ու ձևի դպրոցը աւարտողներից։ Կար ու ձևի արհեստանոցում 1909 և 1910 թ. շրջաններում կատարուել է մօտ 775 կտոր պատէրներ։

Զ. Դպրոց-արհեստանոց։

Դպրոց-արհեստանոցում, կան ներկայումս 30 աշակերտուհիներ, որոնք բացի կար ու ձևը անցնում են գանազան օժանդակիչ առարկաներ՝ Հայոց լեզու, Ռուսաց

լեզու, թուաբանութիւն, երգեցողութիւն, նկարչութիւն։

Դպրոցը 2 տարուայ ոսպնթաց է։ Աշակերտուհիները սովորում են ձրի։ Դպրոց արհեստանոցում աշակերտուհիները վարժւում են կար ու ձևը այն նիւթերի վրայ որը առնուում է ընկ. իր միջոցներով։ Դպրոց-արհեստանոցի աշակերտուհիների պատրաստած իրերը ընկ. վաճառում է իր կազմակերպած էժան վաճառքներին՝ շատ էժան գնով։

Ընկերութեան վարչութեան վերաբերմունքը դէպի գանազան հասարակական երևոյթներ։

Վարչութիւնս մասնակցել է Վեհափառ Կաթուղիկոսի ընդունելութիւնին և արժանացել է նրա օրհնութեան կոնդակին, որը տպուած է հաշուի առաջին երեսում։ 2, Մասնակցել է ընկերութիւնների միացեալ ոյժերով Աղանացոց կոտորածից վնասուածների օգտին տրուած զբօսանքին։ 3, Մասնակցել է Վեհափառ հայրապետի թաղմանը, ուղարկելով էջմիածին մի ներկայացուցիչ։ 4. Մասնակցել է պ. Գ. Մելրաղեանի և Ս. Ծերեթելու յօբելեաններին, ընտրելով պատգամաւոր, որը շնորհաւորել յօբելեարներին ճառով։

Առհասարակ Մեղու ընկ. իւր գործունէութեան շրջանում, միշտ աշխատել է արձագանք տալ ամեն մի հասարակական երևոյթի։ Եւ այս պատճառաւ ընկ. վարչութիւնը ուղարկել է շնորհաւորական հեռագիր Պետերբուրգի 1909 թ. դեկտ. ընդհանուր Ռուսաց կանանց համագումարին։ Յաւակցական հեռագիր „Русское Вѣдомость“-ի խմբագրութեան հոչակաւոր գրող Լեվ Տոլստոյի մահուան առիթով։ Ընկ. ստանալով հրաւէր Պետերբուրգի՝ Կայսրուհու հովանաւորութեան տակ գտնուող „Попечительство о трудовой помощи“ ընկերութիւնից, գրուել է անդամ այդ ընկ. և ուղարկել է մի զեկուցում նրանց համագումարին իր գործունէութեան մասին և Կովկասում կանանց աշխատանքների մասին։

Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձնաւորութիւններին, որոնք չեն խնայել այսպէս թէ այնպէս աջակցել ընկերութեանը. պ. պ. Խաչատուր Աֆրիկեան՝ին, Նիկողայոս Թէրզիբաշեանցին, Յովհաննէս Ակունեանցին, Տիգրան Նազարեանցին, բժիշկ Շիսեանցին և Արամ Յակովբեանցին։

Թիֆլիսի հայուհեաց «ՄԵՂՈՒ» աշխատանքի տան ընկերութեան 1909 և 1910 թուերի օգտի և վնասի հաշիւը.

ԵԿԱՄՈՒՏ

1	Մնացորդ գումարը 1908 թուի հաշուից՝ ա) դրամով . . . . . 2009—31 բ) ինվենտարով և նիւթերէն 500—»	2509	31
2	% դրամագլխից	8	83
3	Անդամավճարներ	1032	—
4	Նուէրներ՝ ա) դրամով . . . . . 2265—» բ) իրերով . . . . . 150—»	2415	—
5	Պարբերական օժանդակութիւն քաղաքային վարչութիւնից	300	—
6	Զուտ արդիւնք ընկ. օգտին կազմուած ներկայաց. զբօսանք. բաղարն. և այլն .	3233	68
7	Արդիւնք աշխատանքի տան կար ու ձևի և կարտօնաժնի արհեստանոցներից .	—	—
8	Արդիւնք կապալներից	1793	79
		11.292	61

ԾԱԽՔ

1	Աշխատանքի տան դպրոցի, կազմարանի, կարտօնաժնի և կար ու ձևի արհեստանոցների—բացի իրանց մուտքից ստացուած գումարներից—մնացած ծախքը (տան վարձ, ռոճիկներ ծառայողներին, նիւթերէն և այլն) . . .			6936	03
2	Մնացորդ գումար առ 1-ն յունվ. 1911 թ.				
	ա) դրամով—Պետ. խնայող գանձ.	8	83		
	2-դ փոխադարձ վարկի ընկ.	800	—		
	Թիֆլ. առևտրակ բանկում.	200	—		
	Ինտէնդանտատվոյում . . .	1393	79		
	Ընկ. գանձապետի մօտ . . .	153	96	2556	58
	բ) Իրերէններով և նիւթերէնով			500	—
	գ) Ինվենտարով			1300	—
				11,292	61

Թիֆլիսի Հայուհեաց «ՄԵՂՈՒ» աշխա
1909 և 1910 թուերի

ՄՈՒՏՔ

1	Մնացորդ գումար 1908 թուից՝ ա) դրամով . . . . . 2009-31 բ) ինվենտ և իրեղեններով 500- »	2509	31
2	% Արքունական բանկից	8	83
3	Ընկ. մի տեղորդ սենեակից վարձ	140	—
4	Մուտք աշխատանք տանից	3200	—
5	Անդամավճարներ՝ (տես ցուցակը)	1032	—
6	Նուիրատուութիւններ՝ տես ցուցակը) . . . ա) դրամով . . . . . 2265- » բ) իրեղեններով . . . . . 150- »	2415	—
7	Ներկայացումներից. դրօսանքներից. բազարներից	4733	68
8	Պարբերական օժանդակութիւն քաղաքային վարչութիւնից	300	—
9	Կապալներից՝ ինտենդանտստվայում, քաղաքային հինարկութեանց և մի քանի զօրաբաժանների մէջ	12500	—
10	Պարտք մուրհակներով	6000	—
11	Հրդեհի ապահովագրութեան ընկեր-ից . .	5100	—
		37938	82

տանքի տան ընկերութեան
ընդհանուր ել և մտից հաշիւը։

ԵԼՔ

1	Աշխատանքի տան ծախք՝ ա) տան վարձ, վառելիք, լուսաւորութիւն, նիւթեղէն ձեռագործի և կարտօնաժի արհեստանոցների համար, դպրոցի ծախք . . . . . 4281-21 բ) ռոճիկներ ծառայողների . 8215-21 գ) կապալներ կազմակերպ. 964-14	13.460	56
2	Օժանդակութիւն աշխատաւոր կանանց՝ ա) դրամով (աշխատ. վարձ) 7306- » բ) իրերով . . . . . 150- » գ) Զրի թէյարանի միջոցով . 25- »	7.481	—
3	Ներկայացումներ և դրօսանքներ կազմակերպելուն	1500	—
4	Մանր ծախքեր	90	68
5	Վճարուած պարտք մուրհակներով	5500	—
6	% մուրհակների	450	—
7	Հրդեհի ՁԼասը ծածկելուն	5100	—
		33.582	24
8	Ինվենտար և մեքենաներ ձեռքբերելու (արժէքը).	1300	—
9	Մնացորդ առ 1-կն յունվ. 1911 թ՝ ա) դրամով պետ. խնայող դանձարանում . . . . . 8-83 2-դ վարկի ընկ. մէջ . 800- » Թիֆլ. առևտրակ. բանկի 200- » Ինտենդանտստվայում 1393-79 Ընկ. դանձապահի մօտ 153 96 բ) իրեղէններով—պատրաստի իրեր 350- » Նիւթեղէն . . . . . 150- »	2556 500	58 —
		4356	58
		37938	82

Թիֆլիսի հայուհեաց «ՄԵՂՈՒ» աշխա
1909 և 1910 թուե

ԱԿՏԻՒ (կարողութիւն)

1	Թիֆլիսի 2-րդ փոխադարձ վարկի ընկ. № 1208 տոմսով	800	—
2	Թիֆլիսի առևտրական բանկում № 55013 տոմսով	200	—
3	Պետական խնայող. գանձարանի № 39122 գրքոյկով	8	83
4	Առձեռն դրամ ընկ. գանձարանում առ 1-ն յունվար 1911 թ.	153	96
5	Ինռէնդանտովոյում ստանալիք ըստ հաշուի	1393	79
6	Ընկերութեան ինվէնտարը (մեքենաներ և այլն)	1300	—
7	Պարարտի ծախու իրեր և նիւթեղէն . .	500	—
		4356	58

տանքի տան ընկերութեան
ի բալանսը.

ՊԱՍՍԻՒ (պարտք)

1	Անցեալ տարիներից կազմուած ֆոնդ ընկերութեան գործունէութիւնը լայնացնելու նպատակով	2000	—
2	Վճարելու պարտքեր՝ ա) մուրհակներով . . . 500 — բ) հաշիւներով . . . . 350 —	850	—
3	Ծախքի գումար մնում է (գումարով և ինվէնտարով)	1506	58
		4356	58

Նախահաշիւ

Թիֆ. հայուհեաց «ՄԵՂՈՒ»

ՄՈՒՏՔ

1	% դրամագլխից	10	—
2	Մուտք աշխատանքի տանից՝		
	ա) մօղնի արհեստանոցից . . 1200 ր.		
	բ) կարաձևի » . . 100 ր.		
	գ) կարդնաժի » . . 1200 ր.		
	դ) կապալների » . . 2000 ր.		
	ե) դպրոցից » . . 100 ր.	4600	—
3	Անդամներից	500	—
4	Նուէրներից	1000	—
5	Քաղ. վարչութիւնից	150	—
6	Ներկայացումներից	1800	—
		8060	—

1911 թուի

աշխատանքի տան ընկերութեան

ԾԱԽՔ

1	Տան վարձ	1080	—
2	Ծառայողներից ռոճիկներ		
	ա) մօղնի արհեստանոցի . . 2000 ր.		
	բ) կարուձևի » . . 600 ր.		
	գ) կարտօնաժի » . . 1300 ր.		
	դ) կապալների » . . 1000 ր.		
	ե) դպրոցի » . . 300 ր.		
	զ) ծառաներին » . . 180 ր.	5380	—
3	Ինվենտար ձեռք բերելու	100	—
4	Վառելիք, լուսաւորութիւն, նիւթեղէն և մանր ծախք	400	—
5	Պոդբեադի կազմակերպութեան ծախք . .	500	—
6	Դպրոցի ծախք	100	—
7	Ընկ. ֆօնդի հաշւից	500	—
		8060	—

Համառոտ հաշիւ Թիֆլիսի հայուհեաց «ՄԵՂՈՒ» աշխա
1909 թ-ի հոկտեմբերի 1-ից

ՄՈՒՏՔ

1	Կասսայի գրքով	1714 31		
2	Գատրաստի պատուէրներից . . .	634 —	2248	31
3	Փոխարինութիւն ընդհանուր կասսայից՝			
	ռոճիկների ընդհ. հաշիւ . .	1300 —		
	ինվէնտարի հաշիւ	600 —	1900	—
			4248	31

տանքի տան ընկերութեան կարտօնաժի արհեստանոցի
մինչև 1910 թ. հոկտ. 1-ը.

ԾԱԽՔ

1	Կասսայի գրքով	981 23		
2	Վճարելու պարտքերը	402 —		
3	Գատրաստի պատուէրների ծախք	135 —		
4	Տան քրէհ, ռոճիկներին	431 42	2818	23
	Մնացորդի հաշիւը			
	Ապառիկներ զանազան անձ. վրայ	293 45		
	Սկլադի ապրանքի արժէքը . . .	528 —		
	ինվենտարի արժէքը	470 66	1430	08
			4248	31

Ինտենդանտստվայի

ՄՈՒՏՔ

1	Կաբելավարձ Ինտենդանտստվայից՝		
	ա) 9450 հատ գոշակի երեսներից հատին $1^3/_8$ կոպ.—129-93$^3/_4$		
	բ) 9450 » բարձի երեսի աստարից » $1^1/_4$ կ. —118-12$^1/_2$		
	գ) 45150 » բարձիերեսներից » $1^1/_4$ կ. —564-37$^1/_2$		
	դ) 45150 » շարսաֆներից » $1^1/_4$ կ. —564-37$^1/_2$		
	ե) 75600 » երեսսրբիչներից » 1 կ. —507-50		
	զ) 75600 » շապիկներից » $6^1/_2$ կ. —4914- »		
	է) 75600 » վարտիկներից » $6^1/_2$ կ. —4914-»	11708	31
2	Կարող կանանց վաճառած թելից	1743	16
3	Ինտենդանաստվօից բաց թողած նիւթեղէնից*) սպասելիք կտորտանքներից (прикрой)	1610	—
4	Մուտք կրակից ապահովագր. ընկ-ից . . .	5100	—
5	Մուրհակների զեղջումից	6000	—
	*) Նիւթեղէնների տեսակը, չափը և արժէքը՝ ա) աստարի քաթան (подкл. холстъ) 166 556—4 —արշ 15$^3/_4$ կ. բ) բամբակի կտոր (бязь) 1.630 7 5—10—» 14 կ. գ) շապկի քաթան (рубашеч. холстъ) 88.112—8 —» 19 կ. դ) տիսմա 218. 925—» 3/5 կ. ե) շնուր . . . . . 75.600—» 2/5 կ.		
	Ընդհանուր 2.179.909 արշ. 6 վեր. 137.089 ր. 30 կ.		
		26161	47

Կապալի հաշիւը

ԵԼՔ

1	Տան վարձ	900	—
2	Ռոճիկներ ծառայողների	2215	21
3	Մանր ծախք	6	69
5	Կապալի կազմակերպելուն զանազան ծախք.	964	14
	Վարձադրութիւն տշխատող կանանց իւրաքանչիւր շապկին . . 4 կ. » վարդիկից . 4 կ. » գոշ. աստառից $1^1/_2$ կ. » բարձի երեսներից $^1/_4$ կ. շարսաւ $1^1/_2$ կ. սրբիչ $^1/_2$ կ. 7395-80 Թելի գինը դուրս գալով 1693-10	5702	64
6	Թել առնելուն 1693—16+518=	1743	16
7	Կոճակների առ.	555	84
8	Հրդէհից յետոյ գնուած նոր նիւթեղէնի . .	4169	38
9	» » կրկնակի վարձատրութիւն աշխ. կանանց	595	55
10	Ապահովագրութեան ծախքեր	640	—
11	Վճարուածէ մուրհակներով	5500	—
12	» %	450	—
13	Կտորտանքից (прикрой) ջնաս	630	—
14	Ուրիշ ջնասներ՝ կորուստ, աւելորդ ծախք	295	07
15	Արդիւնք պօտրեալտից	1793	79
		26.161	47

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

«ՄԵՂՈՒ» աշխատանքի տան ընկերութեան վերաստուգիչ յանձնաժողովը քննութեան ենթարկելով ընկերութեան 1909 և 1910 թուերի դրամական հաշիւները՝ գտաւ ճիշտ, ծախսերը փաստաթղթերով վաւերացրած և դրամական կարողութիւնը լրիւ ու անվտանգ։

1) Պաղրիադի հաշուի ծախսի մէջ ցոյց տուած վեց հարիւր երեսուն (630) ռուբլի գնասը (որը պիտի ստացուեր կտորների տնտեսութիւնից) պէտք է վերագրել գլխաւորապէս ձեռքի անբարեխղճութեանը, որի պատճառով նա ժամանակին հեռացուել է պաշտօնից։

2) Հետևեալ հաշուի իւրաքանչիւր յօդուածը (թէ մուտքի և թէ ծախսի) պէտք է ունենայ ըստ կարելոյն ընդարձակ բացադրութիւն։

3) Աշխատանքի տան իւրաքանչիւր բաժինը պէտք է ունենայ իւր առանձին պատասխանատու գործադիր մասնաժողովը վարչութեան անդամներից և մասնաւոր ձեռնահաս անձերից։

4) Վերաստուգիչ յանձնաժողովը ինտենդանտստվօի պաղրեադը կառավարող վարչութեան անդամների գործունէութիւնը գտնում է գոհունակութեան արժանի։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ
տ. Երանեակ Գիւզալեան.
տ. Թէրզիբաշեան.
օր. Մարիամ Սերեբրակեան.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1909 և 1910 թ.

Նախագահ՝ տ. Սոֆիա Մինասեանց
Գանձապահ՝ Կոյս Հռիփսիմէ Թայիրեանց (ինքնակամ հրաժարուեց)
Փոխ-նախագահ՝ տ. Ս. Զ. Յակոբեան
Քարտուղար՝ տ. Ֆլորա Վարդանեան
Անդամներ՝ տ. Աննա Օրդուխանեան
տ. Մարիամ Թևեան
տ. Եղ. Աբրահամեան
տ. Վարդ. Յովհաննիսեան
տ. Եղ. Մուշայեան
տ. Քամոյեան
տ. Դաւթեան
օր. Մարիամ Արարատեան

Փոխ-անդամներ՝ օր. Ք. Ղազարեան
տ. Մարգարեան
տ. Ա. Բոյաճեան

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ
տ. Ս. Թերզիբաշեան
տ. Եր. Գիւզալեան
օր. Մ. Սերեբրէկեան

ՆՈՒԷՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Կոմսուհի Վարանցովա-Դաշկովայից	200 ր.
Քաղ. վարկի ընկերութիւնից	200 »
Ժողովարանից	100 »
Քաղ. ա. փոխ. վարկի ընկ.	50 »
Նաւթարդիւնաբեր. ընկ.	90 »
Տ. Խոսրովեանի ժառանգներից	500 »
Գ.Գ. Գր. և Մն. Փրիդոնեաններից	200 »
Գ. Շահնազ. Աթաբէգեան	100 »
Տ. Վրթանիսեանից	100 »
Տ. Վարթանէսեանից	100 »
Գ. Քիւրբչեանից ի յիշատակ հանգուցեալ մօր	100 »
Տ. Ադամեանից	100 »
Տ. Փիթոյեանից	50 »
Գ. Մելիք Նուբարեանից	50 »
Գրիգոր Միսումեանի յիշատակին	50 »
Տ. Թայիրեանից	35 »
Գ. Ա. Շանշեանից	30 »
Բաբգէն Հայրը սուրբից	25 »
Տ. Նունէ Միրաքեանից	20 »
Գ. բժ. Յով. Աթաբէկեանից	25 »
Տ. Կրասիլնիկեանից	30 »
Տ. Ստեփանեանից	15 »
Կոյս Լորիս-Մելիքեանից	10 »
Կատար. Ներսիսեանից	15 »
Գ. Տէր-Գասպարեանից	20 »
Տ. Թէյմուրազեանից ամուսնու յիշատակին	20 »
Մի ոմն	30 »
	2265 ր.

Նուէրներ իրեղէններով

Տ. Տ. Եղ Կորդանեանից և Ամալիա Վրդանիսեանից մի ասեղնագործ պատկեր ոսկեզօծ շրջանակով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1909 թուականի

Գատուաւոր անդամուհի Կոմսուհի Վարանցովա-Դաշկովա

Մշտական անդամուհիներ

1. Կոյս Հռիփսիմէ Թայիրեան 100 ր. | 2. տ. Ամալիա Վրդանիսեան 100 ր.

Իսկական անդամուհիներ

1. տ. Միլեան Վառվառէ 12 ր.
2. տ. Օրդուխանեան Անանա 10 ր.
3. տ. Զարգարեան Նունէ 10 ր.
4. տ. Անանեան Ոսկի 5 ր.
5. տ. Փրիդոնեան Մարիամ 10 ր.
6. տ. Քամոյեան 10 ր.
7. տ. Մարտիրոսեան Հակ. 6 ր.
8. տ. Ղորդանեան 6 ր.
9. տ. Մանուէլեան 6 ր.
10. տ. Երզնկեան 6 ր.
11. տ. Սարգսեան Մարգ. 6 ր.
12. տ. Մելիքեան Թամարա 6 ր.
13. տ. Բոյեաջեան Արաքս 6 ր.
14. տ. Թևեան Մարիամ 6 ր.
15. օր. Սերեբրէկեան Մար. 6 ր.
16, տ. Ասլամազեան Մար. 6 ր.
17. տ. Իշխ. Բէհբութեան Կատ. 5 ր.
18. տ. Գրամեան 5 ր.
19. տ. Զարթէղեան 5 ր.
20. տ. Գուլեան 5 ր.
21. տ. Կաֆեան Վառվառէ 5 ր.
22. տ. Կարալեան Սրբուհի 5 ր.
23. տ. Խատիսեան 5 ր.
24. տ. Իշխ. Բէհբութեան Ն. 5.
25. օր. Ղազարեան Քալիա 5 ր.
36. տ. Զուբալեան Նատ. 5 ր.
27. տ. Դաւթեան Վարդ. 5 ր.
28. տ. Նալչաջարեան Ս. 5 ր.
29. Իշխ. Արղութեան Մար. 5 ր.
30. տ. Սահակեան Բարոյ 5 ր.
31. օր. Խանդամիրեան Վ. 5 ր.
32. տ. Գասպարեան Ս. 5 ր.
33. տ. Ադամեան 5 ր.
34. տ. Բոզարջեան Մ. 5.
35. տ. Նարիմանեան Ն. 5 ր.
36. տ. Սուրինեան Մար. 5 ր.
37. տ. Դաւթեան Քալիա 5 ր.
38. տ. Փիրումեան 5. ր.
39. տ. Շխեան Նատալիա 5 ր.
40. տ. Տէր-Յակոբեան Ս. 5 ր.
41. տ. Խանդամիրեան Ն. 5 ր.
42. տ. Իսպէնդարեան 5 ր.
43. տ. Մինասեան Սոֆիա 5 ր.
44. տ. Յովհաննիսեան Վառ. 5 ր.
45. ա. Շահպարոնեան 5 ր.
46. տ. Գասպարեան 5 ր.
47. տ. Փրիդոնեան Ծաղիկ 5 ր.
48. տ. Կրասիլնիկեան Հ. 5 ր.
49. տ. Աբովեան Նատ. 5 ր.
50. տ. Յովհաննիսեան Շուշ. 5 ր.
51. տ. Վարդապետեան Ն. 5 ր.
52. տ. Եղիազարեան Ա. 5 ր.
53. տ. Աբրահամեան Եղի. 4 ր.
54. տ. Հախվերդեան Անանա 3.
55. տ. Զարթէղեան Փեփ. 3 ր.
56. տ. Ծուրինեան Շուշ. 3 ր.
57. տ. Օրբէլի Վարդուհի 3 ր.
58. տ. Յովհաննիսեան Դար. 3 ր.

59. տ. Յովհաննիսեան Վարդ. 3 ր.
60. տ. Արիւծեան Եղիս. 3 ր.
61. տ. Շահվերդեան 3 ր.
62. տ. Դիլանեան Փ. 3 ր.
63. տ. Ջալալեան Կատ. 3 ր.
64. օր. Գասպարեան Եղ. 3 ր.
65. տ. Սողոմոնեան Ղումաշ 3 ր.
66. տ. Կարալեան Սօնիա 3 ր.
67. տ. Յովհաննեան Մար. 3 ր.
68. տ. Ծուրինեան Մարգ. 3 ր.
69. տ. Գիւզալեան Եր. 2 ր.
70. տ. Մարգարեան Եղիս. 3 ր.
71. տ. Մանուչարեան Մ. 3 ր.
72. տ. Զարթէղեան Աննա 3 ր.
73. տ. Ասլամազեան Ֆլորա 3 ր.
74. տ. Ասլամազեան Վարդ. 3 ր.
75. տ. Սահաթոսղեան Ն. 3 ր.
76. Իշխ. Թումանեան 3 ր.
77. տ. Բոզարջեան 3 ր.
78. տ. Մէլիք-Բէգլարեան Ա. 3 ր.
79. տ. Գուլեան Աննա 3 ր.
80. տ. Շխեան Մարիամ 3 ր.
81. օր. Մանթաշեան Մար. 3 ր.
82. օր. Միրզոյեան Ա. 3 ր.
83. տ. Տէր-Միքայէլեան Ա. 3 ր.
84. տ. Տէր-Սահակեան Գէն. 3 ր.
85. օր. Մուշէղեան Հռիփ. 3 ր.
86. տ. Ալրէսեան Գայ. 3 ր.
87. տ. Մէհրաբեան Նունէ 3 ր.
88. տ. Ստեփանեան Ֆլորա 3 ր.
89. տ. Գարսօևա 3 ր.
90. տ. Անակչեան 3 ր.
91. տ. Շահվերդեան 3 ր.
92. տ. Ռոստոմեան 3 ր.
93. տ. Մարգարեան Հռիփ. 3 ր.
94. օր. Արարատեան Մ. 3 ր.
95. տ. Օհանջանեան Դժխ. 3 ր.
96. տ. Մաղաքեան Հայկանոյշ 3 ր.
97. տ. Թումայեան Հռիփ. 3 ր.
98. տ. Թումայեան Թագ. 3 ր.
99. տ. Շիօշ-Փիթոյեան Նատ. 3.
100. տ. Մաղաքեան Մար. 3 ր.
101. տ. Լիսիցեան Կատ. 3 ր.
102. տ. Արղութեան Սոֆիա 3 ր.
103. տ. Շահբազեան Շուշ. 3 ր.
104. տ. Յակոբեան Սօնիկ 3 ր.
105. տ. Ցիցիկեան Նունէ 3 ր.
106. տ. Զախմախչեան 3 ր.
107. տ. Յովհաննիսեան Մ. 3 ր.
108. տ. Կաֆեան Սաթ. 3 ր.
109. տ. Վարդպատրիկեան 3 ր.
110. տ. Ակունեան Թագ. 3 ր.
111. տ. Յարութիւնեան Ման. 3 ր.
112. տ. Բորիսեան Նատ. 3 ր.
113. տ. Օհանեան Գայանէ 3 ր.
114. տ. Մուչայեան Եղ. 3 ր.
115. կոյս Դոլմաղեան Մ. 3 ր.
116. օր. Կարա-Մուրզա 3 ր.
117. տ. Զանպուլադեան 3 ր.
118. տ. Խաչատրեան Ս. 3 ր.
119. տ. Վարդանեան Ֆլորա 3 ր.
120. տ. Օհանջանեան Ն. 3 ր.
121. տ. Դաւթեան Ս. 3 ր.
122. տ. Սունդուկեան Սոֆ. 3 ր.

ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ

123. պ. Ռոստոմեան 9 ր.
124. պ. Աթաբէգեան 5 ր.
125. պ. Քիւրքչեան 10 ր.
126. պ. Յովհաննիսեան Ա. Խ.
127. պ. Սարգսեան Եփրէմ 3 ր.
128. պ. Սարգսեան Ղազարոս 3 ր.
129. պ. Մուրադ-Բէգեան 3 ր.
130. պ. Գասպարեան Ստ. 3 ր.
131. պ. Թէրզիբաշեան Ն.
132. պ. Նազարեան Տիգ.
133. պ. Ակունեան
134. պ. Յակոբեան Արամ

Գործող

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1910 թուականի

Գատուաւոր անդամուհի Կոմսուհի Վարանցովա-Դաշկովա

Մշտական անդամուհիներ

1. Կոյս Հռիփսիմէ Թայիրեան 100 ր. (1909 թ)
2. տ. Ամալիա Վրդանիսեան 100 ր. (1910 թ.)

Իսկական անդամներ

1. տ. Միլեան 12 ր.
2. տ. Օրդուխանեան 10 ր.
3. տ. Շահպարոնեան 10 ր.
5. տ. Զարգարեան Նունէ 10 ր.*
5. տ. Քամոյեան 10 ր.*
6. տ. Մարտիրոսեան Հականոյշ 6 ր.
7. տ. Ղորղանեան 6 ր.
8. տ. Դաւթեան 6 ր.*
9. տ. Թևեան 6 ր.*
10. տ. Անանեան Ոսկի 10 ր.
11. տ. Մէլիք-Աղամիրեան Ա. 10 ր.
12. Իշխ. Բէհբութեան Կատ. 5.
13. տ. Գրամեան 5 ր.
14. տ. Զարթէղեան 5 ր.
15. Գուլեան Դարիա 5 ր.
16. տ. Կաֆեան Վառվառէ 5 ր.
17. տ. Մէլիք-Շահնազարեան 5 ր.
18. տ. Տէր-Միքայէլեան 5 ր.
19. տ. Վարդանեան 5 ր.
20. տ. Մարդամեան 5 ր.
21. տ. Պատուականեան 5 ր.
22. տ. Հազարապետեան 5 ր.
23. տ. Վարդանեան 5 ր.
24. տ. Փիրումեան 5 ր.
25. տ. Սահակեան 5 ր,
26. տ. Եղիազարեան Շուշ. 5 ր.
27. տ. Տէր-Յակոբեան 5 ր.
28. տ. Շխեան 5 ր.
29. տ. Ս. Մինասեան 5 ր.
30. տ. Փրիզոնեան 5 ր.
31. տ. Խանդամիրեան 5 ր.
32. տ. Կորգանեան Եղիս. 5.
33. տ. Խաչատրեան Եղիս. 5 ր.
34. տ. Գասպարեան Ս. 5 ր.
35. տ. Թամամշեան 5 ր.
36. տ. Նալչագարեան 5 ր.
37. տ. Աֆանասեան 5 ր.
38. տ. Հայրապետեան Կատ. 5 ր.
39. տ. Բոզարջեան 5 ր.
40. տ. Սարգսեան Մարգարիտ 5 ր.
41. տ. Ղազարեան Քալիա 5 ր.
42. տ. Յովհաննիսեան Վառ. 5 ր.
43. տ. Աբովեան Նունէ 5 ր.
44. տ. Սողոմոնեան Ղումաշ 5 ր.
45. տ. Կարալեան Սրբուհի 5 ր.*
46. տ. Աբրահամեան Եղիս. 4 ր.
47. տ. Յակովբեան Շուշ. 4 ր.
48. տ. Ակունեան Թագուհի 3 ր.
49. տ. Հախվերդեան Աննա 3 ր.
50. տ. Օհանջանեան Նունէ 3 ր.*
51. տ. Դաւթեան Սրբուհի 3 ր.
52. տ. Արիւծեան 3 ր.

53. տ. Տէր-Յովհաննիսեան 3 ր.
54. իշխ. Թումանեան Մար. 3 ր.
55. տ. Յովհաննիսեան Դար. 3 ր.
56. տ. Շխեան Մարիամ 3 ր.
57. տ. Զալալեան 3 ր.
58. տ. Զոհրաբեան Շուշ. 3 ր.
59. տ. Ասլամազեան Մար. 3 ր,
60. տ. Խատիսեան Մար. 3 ր.
61. տ. Գոզալեան Երան. 3 ր.
62. տ. Մարգարեան Հռիփ. 3 ր.
63. տ. Մաղաքեան Հայկան. 3 ր.
64. տ. Բոյաճեան Արաք. 3 ր.
65. տ. Ղուլեան Աննա 3 ր.
66. տ. Գայդամակինա 3 ր.
67. տ. Օհանջանեան Դժխոհի 3 ր.
68. տ. Կաֆեան Սաթենիկ 3 ր.
69. տ. Անակչեան 3 ր.
70. տ. Թումանեան Հռիփսիմէ 3 ր.
71. տ. Սուրինեան Մար. 3 ր.
72. օր. Սերեբրէկեան Մար. 3 ր.
73. տ. Մուշայեան Եղ. 3 ր.
74. տ. Լիսիցեան Կատար. 3 ր.
75. տ. Մէհրաբեան Նունէ 3 ր.
76. տ. Վարդապարթեկեան 3 ր.
77. տ. Յովհաննիսեան Մար. 3 ր.
78. տ. Յարութիւնեան Եր.
79. տ. Զարթէղեան Աննա 3 ր.
80. տ. Օրբէլի 3 ր.
81. տ. Աբրահամեան Ս. 3 ր.
82. օր. Արարատեան Մ. 3 ր.
83. տ. Ս. Զ. Յակոբեան 3 ր.
84. տ. Շահբազեան 3 ր.
85. տ. Մանանդեան Վառ. 3 ր.
86. տ. Յուրինեան Մարգ. 3 ր.
87. տ. Վարդանեան Ֆլորա 3 ր.*
88. տ. Օհանեան Գայանէ 3 ր.
89. տ. Թէրզիբաշեան Ս. 3 ր.*
90. օր. Մուշէղեան Հռիփ. 3 ր.*
91. տ. Մայիսէեա 3 ր.
92. տ. Մաղաքեան Մարիամ 3 ր.
93. տ. Դիլանեան Փ. 3 ր.
94. տ. Ասլամազեան Փեփ. 3 ր.
95. տ. Ասլամազեան Վառ.
96. տ. Տէր-Մինասեան 2 ր.

ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ

97. պ. Ռոստոմեան Համ. 9 ր.
98. պ. Աթաբէկեան 5 ր.
99. պ. Յովհաննիսեան Ա. Խ. 3 ր.
100. պ. Քիւրքչեան 10 ր.*
101. պ. Սարգսեան Եփրէմ 2 ր.
102. պ. Մուրադ-Բէգեան 3 ր.
103. պ. Թէրզիբաշեան Նիկ.
104. պ. Նազարեան Տիգ.
105. պ. Ակունեան
106. պ. Յակոբեան Ար.

Դորքեր

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՌ

Ծանոթ. Ասողանիներ մնացում են 1911 թուականի հաշիւների մէջ.

«Ազգային գրադարան»
NL0142574

14502

4-101a